## « ՅԻՇԱՏԱԿԻ ՄԵԾԻ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԹԵՈԴՈՍԻ

## Ի ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵՆԷ »

---

*Այս վերնագիրը կը կրէ հետագայ հատուածը, որ կը գտնուի Պարիսի Ազգ. Մատենադարանի հայերէն ձեռագիրներէն* Anc. fonds. arm. N° 44 *թուահամարով նշանակուած խոշոր Տօնականին մէջ, թղ.* 113 *բ։*

*Ձեռագիրը* 599 *թամբակեայ թերթերէ կը բաղկանայ, եւ գրուած է միջինմեսրոպեան երկաթագրով,* 1194*ին. — Գրեցաւ «ի թուականութես Հայոց ի ՈԽԳ. ի հայրապետութե Տն Գրիգորիսի Հայոց Կաթողիկոսի, ի մանկական տիոց Տղայ կոչեցեալ . . . առ սահմանաւք անմատոյց բերդիս որ կոչի Տիւրիկի, ի գիւղս որ յորջորջի Նեղկուկ. եւ կատարեցաւ ձեռամբ իմով տառապեալ եւ յոգնամեղ եւ ախմար գրչի Ստեփանոսի . . .»։*

*Հատուածը տեղ տեղ նման է Մ. Խորենացիի Պատմութեան գիրք Գ, գլ. լգ, ծդ, կա եւ այլուր, ուստի՝ հաւանական է թէ ձեռագիրս քաղուած է այն բնագրէն — «ի Կայսերական Պատմութենէ» — որմէ օգտուած է նաեւ մեր Պատմահայրը։*

*Կ. Ց. Բ.*

**)Թէոդոս Մեծ որդի Գրատիանոսի, թագաւորէ ամս տասն եւ հինգ։ Ի սորա չորրորդ ամին եղեւ ժողովն ի Կոստան(դին)ուպօլիս. ՃԾ. եպիսկոպոսք վասն հոգեմարտին Մակեդոնի որ հայհոյեաց զՀոգին Սբ նուաղ ասել քան զՀայր եւ զՈրդի. եւ էր նա միաբան յառաջ քան զժողովոյն գումարելն. յետ որոյ Փիլոս Արիանոս ունէր զեպիսկոպոսութիւն Կոստանդինուպօլսի. զոր հանէր ի քաղաքէն Թէոդոս թագաւորն եւ տայր զտեղակալութիւն Գրիգորի Ածարանի մինչեւ ցհաւաքել ժողովոյն. եւ էր նա յառաջագոյն եկեալ ի Կոստանդինուպօլիս վասն Արիոսաց հերձուածոց. Կիւրղոս Երի. Տիմոթեոս անուանացուած Աղեքսանդրի. Մելիտոս Անտիոքայ. Գրիգոր Նիւսիոյ, Գեմեղիոս Կեսարիա Պաղեստինացւոց, Դամասկոս Հռոմայ, Գրիգոր Ածարան Կոստանդինուպօլսի, զորոյ զաթոռն ընկալաւ ձեռնադրեալ ի ժողովոյն. յետոյ փոխանակ նորա լինի Յոհան Ոսկեբերան. եւ սահմանել սրբոյ ժողովոյն զդաւանութիւն հաւատոյ քարոզեցին զկենդանարար եւ զսբ զՀոգին հաւասարապատիւ եւ փառակից եւ համագոյակական Հաւր եւ Որդւոյ եւ նզովեցին զՄակեդոն յետ մահ-*

---

*) Թղ. 113 բ։

digitised by A.R.A.R.@

ուան ի մեւսայս ընդ ամենայն հերձուածողսն. եւ նոյն ժամայն յարեան մանկունքն որ յԵփեսոս վասն հերձուածոյն որ էր ի ժամակին որք ոչ հաւատային յարութեան մեռելոց. եւ վասն նորին ուժգին ձգնութեամբ խնդրեալ յԱյ Թէոդոս Մեծ թագաւորն եւ յարեան մանկունքն եւ եկեալ թագաւորն եւ տեսեալ գնոսա եւ քաղում ինչ խաւսեցաւ ընդ նոսա եւ դարձեալ ննջեցին:

Եւ յառաջ քան զԹէոդոս թագաւորն եղեն ժողովք վեց յԱրիանոսաց անգլխ հակառակ ուղղափառ հաւատոյ, զորս ոչ ընդունի Եկեղեցի Այ: Առաջինն ի Տիւրոս: Երկրորդն յԱնտիոք: Երրորդն ի Սելեւկիայ. չորրորդն ի Կոստանդնուպաւլիս առ Եւգոմիւ Արիանոսաց հայրապետիւ. հինգն 'ի Նիկիայ Թրակացւոց. վեցն 'ի Սերմին:

Արկադիոս, եւ Ոնորիոս որդիք Թէոդոսի թագաւորին ամի ԻԴ. ի սոցա երկրորդ ամին եղեւ Եւթաղիոս եպիսկոպոսն Աղեքսանդրացի որ հրաչագան յաւրինուածով զԳործս Առաքելոցն եւ զԿաթուղիկեայսն Թուղթսն զյառաջաբանս եւ զգլուխս եւ զմատնաւորս եւ զառնանս եւ զվկայութիւնս կարգեաց վասն հերձուածոյն Կողարքոսի. որք սոսկ մարդ անուանեցին զՔս. զՀին Կտակարանսն ոչ ընդունէին, եւ զվկայութիւնս որ վասն Քի խաւսէին.

*) Թէոդոս Փոքր որդի Արկադեա ամս ԼԹ.

Ով ի նէ (այսպէս) Թագաւորեաց ամս. ԻԶ.

Ի սորա յաւուրս սրբն Սահակ Հայոց հայրապետ: Ի սորա յաւուրս գտաւ դպրութիւ հայերէն լեզուի քան եւ ինն գրով ի Դանիելէ փիլիսոփայէ Ասորւոց կարգեալ զորս առ բերեալ Վռամշապուհ թագաւոր Վրասճայ նախարարեալ ի ձեռն Հաբել երիցու: Իսկ զեւթն գրոյ պակասութիւն Մեսրովբ եպիսկոպոս 'ի Տարաւնոյ ի Հացեաց գեղջէ յազատ տանէ, ամսաւրեաւ պահաւք եւ աղաւթիւք հայցէր յԱյ եւ ցուցեալ նմա 'ի տեսլեանն: Այս լինէր յԱսորոց աշխարհին զի վասն նորին անդր ճանապարհորդեցան: Իսկ զցուցեալ նշանախեցն հանդերձ միաբանելովքն եա գրել Հռոփանոսի դպրիւ Սամոսատացւոյ:

Եւ եւս հերձուածք ի ժամանակին Դիոդորոս Տարսոնացւոյ, եւ Թէոդորի Մամոստացւոյ, եւ Նեստորի Անտիոքացւոյ: Քանզի Թէոդոր աշակերտ էր Պաւղոսի Սամոսատացւոյ. որ չնորհիւ որդի ասէր զՄարիամայ ծնեալ, իսկ բնութեամբ զԱծն բան, եւ ի միութենէ ասէ արժանաւորեցաւ լինել տաճար բանին Այ: Իսկ Դիոդոր Տարսոնացի աշակերտ Թէոդորի ոչ ասէր զԱծն բան ի Մարիամայ ծնեալ այլ մարդ սոսկ ի կնոջէ ծնեալ: Վասն ալնուսիքան գործոյն հաճեցաւ Ած բանն բնակել ի նմա. եւ վասն այնորիկ ճգնէր առ հոգեկանսն զի հնազանդեցուսցէ զմարմնական ախտս եւ արժանասցի կոչել Որդի Այ: Իսկ Նեստոր Անտիոքացի եպիսկոպոս

*) Թղ. 114 ա.

digitised by A.R.A.R.@

*Կոստանդնուպօլսի աշակերտ Թէոդորի Մամոստացւոց, ոչ իշխեցին առէ ասել եթէ Հայրքն թէ Ած բան ծնաւ ի Մարիամայ, այլ ի նշանակել զանուանսն որ ցուցանեն զերկուս բնութիւսն. քանզի Քն, եւ Որդին եւ Տրն, երբեմն զԱծութի զնկուցանէ եւ երբեմն զմարդկութիւն։ Իսկ երբեմն զերկոսեանսն, եւ ոչ զարձեալ այլ որդի, այլ միւս. այլ ինքն էր որդի կրկնակի ըստ բնութե զի բնութեանցն ընտանի կարգաւորութեանն յամենայն ժամ Միայելոց. իսկ արժանաւորութք չարաչարեալ առ Ածութեն միակամ եւ այլ անբաւ են նորա հայհոյութիւքն. քանզի ոչ խոստովանի զԲանն Ած մարդացեալ, այլ ի մարդ բնակեալ. քանզի բնութի ընկալաւ առէ Բանն զմարդկութիւն։ Նոյնպէս ուսուցանէ զամպարշտութիւն հակառակ ողջամիտ վարդապետութեան. զոր գիտացեալ Կիւրղի Աղեկսանդրու եպիսկոպոսապետի գրէ երիցս անգամ առ Նեստոր զառնալ ի հայհոյութեանց եւ միաբանել կաթուղիկէ եկեղեցւոյ խոստովանութե։ Իսկ Նեստոր զընդդէմ հակառակին առնէ պատասխանի. վասն որոյ հարկաւորի երանելին Կիւրիղ գրել *) առ թագաւորն զի տացէ հրաման ժողովելոյ։ Եւ նորա հրամայեալ ժողովել յԵփեսոս 'ի ժամանակս սմին թագաւորութեան եպիսկոպոսք երկերիւր։ Որոց էին գլխաւորք, Կիւրիղ Աղեկսանդրացի, Յոբնաղ Եմի, Մեմնոն Եփեսացի, Յոհաննէս Անտիոքայ, Պաւղոս Եմեսու, Թէոդորոս Անկիւրիա, Ակակիոս Մելիտինոյ, Կեղեստինոս Հռովմայ, Նեստոր Կոստանդնուպօլսի։ Եւ ժողովեալ նզովեցին զՆեստոր, բա՛ յց 'ի Յոհաննէ Անտիոքացւոյ եւ որոց ընդ նմա արեւելից եպիսկոպոսքն թուով ԼԵ. զորս հրապուրեաց Նեստոր 'ի բաց լինել յուղիղ հաւատոյն։ Եւ զԿիւրիղ Աղեքսանդրի հայրապետն սողոսկեալ յԱպողինար 'ի հայհոյութիւն վասն զմիաւորութի Բանին Այ խոստովանելով։ Եւ եղեւ պատառումն արեւելեանցն 'ի Կիւրղէ եւ յորոց ընդ նմա եպիսկոպոսացն, մինչեւ Ճշմարտութի իրացն ծանուցաւ թագաւորին, որպէս ունի յաղագս այսորիկ յիշատակարանացն պատմութիւքն. եւ հրամանաւ թագաւորին հալածական առնէին զՆեստոր ի կողմանս Մծբնայ եւ վարեցաւ ի Թուժաստան յարեւելս։*

*Իսկ Կիւրիղ Աղեքսանդրի հայրապետն ծանուցանէ Յովհաննու Անտիոքայ եպիսկոպոսի զամբարշտութիւն Նեստորի. եւ առաքեն արեւելեանքն զՊաւղոս Եմեսացւոց եպիսկոպոսն առ Կիւրիղ 'ի խաղաղութի եւ եղեւ խաղաղութի Անտիոքացւոցն եւ Եփեսացւոցն։*

*Իսկ յետ լուծանելոյն Նեստորի կալաւ զաթոռ եպիսկոպոսութեն Կոստանդնուպօլսի Մաքսիմիանոս ամս չորս։ Յետ որոյ Պաւղոս Եղիկիա եղեւ հայրապետ Կոստանդնուպօլսի։ Յետ որոյ Փղաբիանոս կալաւ զաթոռ հայրապետութեն եւ սկսաւ ուսուցանել զՆեստորի զհայհոյութիւն։ Իսկ Եւտիքէս վանական ոմն ի զղւոջ· աստադրէր ընդդիմակ Փղաբիանոս*

---

*) *Թղ.* 114 *բ*։

digitised by A.R.A.R.@

միաւորութի ասելով գլուխս ութ․ քանզի ոչ խոստովանէր զԲանն Ած
ի Սբ Կուսէն լեալ մարդ։ Այլ ասէ․ ո՛չ ինչ էառ 'ի կուսէն Մարիամայ
բայց միայն զնմանութի մարմնոյ, եւ կերպարանաւք գտաւ իբրեւ զմարդ
եւ ոչ ճշմարտութբ։ Եւ ժողովեալ Փլաբիանոս զհամախոհ եպիսկոպոսս
իւր լուծանէ ի քահանայութենէ զԵւտիքէս։ Եւ գրեալ զհամարձակու-
թիւն եղանակոյն Թէոդոսի հրամայեաց երկրորդ ժողով լինել յԵփեսոս ի․ ԻԵ․
ամի Թագաւորութե իւրոյ։ Եւ հրամայէ քննել վասն Փլաբիանոսի եւ Եւ-
տիքէ․ եւ ետ տանել զտոմարն Լեւոնի զամսու չորս գլուխ խնդրեալ առ
Փլաբիանոս վասն Եւտիքէ մոլորութենն յորում էր*)ուս բնութիւն խոստո-
վանի զմարմնացեալ Բանին Այ զկուսածին զմարդն․ Քանզի ասէր այսպէս ի․
ԺԴ․ գլուխ իւրոյ հայհոյութեան․ Եւ որդի մարդոյ ասէ ի վերայ եկեալն
ի յերկնուստ, յորժամ որդին Այ զմարմինն առ ի Կուսէն առընկալաւ,
եւ սոսկ մարդ ասէ չարչարեալ եւ մեռեալ։ Եւ ժողովեցան եպիսկոպոսք․
Մ․ Յուվաղիոս Եմի․ Դիոսկորոս Աղէքսանդրի, որում գլխաւորութի ժո-
ղովոյն հաստատեցաւ ի Թագաւորէն։ Դոմաս Անտիոքայ համախոհ Նեստ-
որի․ Եբաս Եդեսացւոց որ զԹուղթն գրեաց ի Մարս որում գովէ զՆեստ-
որի զհայհոյութիւն եւ ամպարշտութի ասէ զԿիւրղի զխոստովանութիւն․
Թէոդորիտոս Կիւրոս քաղաքի աշակերտ էր Յոհաննու Եդեսացւոյ Նեստորի
մոլորութեն հակառակ Կիւրղի Աղեքսանդրացւոյ։ Վասն որոյ գիմագրու-
թիւս արարեալ երկոտասան գլուխս առ Կիւրիղ երկոտասան Նզովս կար-
գեաց․ եւ զԹէոդորիտի Սամուսատացւոյ հաճութբ ասէ բնակել ի մարդն
Ած Բանն։ Քանզի յերրորդ գլխի հայհոյութեն իւրոյ ասէ․ Ոչ ի Կուսէ
ծնեալ զԱյ կերպարանն, այլ տաճար եւ բնակիչ ունելով ըստ Պաւղոսի
ձայնին․ քանզի 'ի նմա հաճեցաւ ասէ ամենայն լրումն Աճութեն բնա-
կել։ Եւ յերկոտասան գլխին ասէ․ Իսկ այնոց է անհաւանելի Տն ցուցա-
նողին զերկուս բնութիւն, ասելով Հրէիցն․ Լուծէք զտաճարս զայս եւ
յերիր աւուր կանգնեցից զսա։ Քանզի լուծանել ցուցանէ զտաճարն եւ
կանգնիչ զԱծ։ Ապա ուրեմն ոչ է Ած չարչարեալն այլ 'ի մէնջ Այ առեալ
զմարդն։ Լեւոնի Հռովմայ զորմէ ասի ոչ գոլ 'ի ժողովն, այլ փոխանակ
իւրոյ առաքէ տալ բերել զգիր հայհոյութեն զերկոտասան գլուխսն Եւ-
սեբի Դորիլէու Փլաբիանոս Կոստանդինուպաւլսի․ եւ ժողովեալ սահմա-
նեցին ըստ հարցն խոստովանութե զնչանակ հաւատոյ կնքեալ միաբա-
նութի մարմնացելոյ Բանին Այ խոստովանելով ճշմարիտ մարդ եղեալ 'ի
Սբ Կուսէն Բանն Ած առացին Իսկ Եւտիքէս խոստովանելով նզովէր զա-
ղանդն իւր․ գիր հայհոյութե այլ ժողովոյն որ ասի Դիբերիոն եւ ըստ
հրամանի կանոնաց ընկալեալ լինէր․ իսկ յայտոյ ի նոյն հայհոյութե
աղանդն զանճայր։

Իսկ համախոհքն եւ հաւանեալքն Նեստորի ոչ դարձան յիւրեանց

---

*) Թղ․ 115 ա։

digitised by A.R.A.R.@

հայհոյութեանց զորս ժողովեաց սա ժողովն. Որ ոչ ասէ զՔս երկուս բնութիւս նզովեալ եղիցի ։

Յայնժամ երանելին Դիոսկորոս լուծանէ զհամախոհսն Նեստորի ըզՓղաբիանոս զպաղատանն եպիսկոպոս որ բարկութիւն Այ հարեալ յետ եւթն աւուր սատակեցաւ ի կենաց. եւ զտոմարն Լեւոնի նզովէր հանդերձ ժողովեցելովքն ընդ *) ինքեան երկերիւր եպիսկոպոսաւքն իբրեւ զնեստորի հայհոյութիւն։ Լուծանէր եւ զԹեոդորիտոս Կիւրոս քաղաքի եպիսկոպոսն, եւ զԻբաս եպիսկոպոսն Եդեսիա, եւ զՅոհան Իգացոց եպիսկոպոսն. եւ զԴոմնոս Անտիոքա եպիսկոպոսն. եւ փոխանակ նոցա ձեռնադրէ եպիսկոպոս զՄաքսիմոս ի ժողովն։ Եւ եղեւ խաղաղութիւն եկեղեցւոյ յաւուրս Թէոդոսի թագաւորի ամս. ԻԲ։

Մարկիանոս եկաց ամս վեց. հրամայեաց ժողով լինել ի Մակեդոն մայրաքաղաք Բիւթանացւոց. քննախնդիր եղեալ լուծմանն Փղաբիանոսի եւ նմին համախոհ եպիսկոպոսացն զի էր ինքն նորին աղանդոյն վասն գումարելոյ ժողովոյն սաստիկ եւս շարժեալ ի Պուղքերիայ զուգակցէ իւրմէ որ էր քոյր Թէոդոսի թագաւորի եւ սիրելի Փղաբիանոսի. որ սաստիկ եւս յորդորէր ի ժողովոյն գումարութիւն, աղանդակից Նեստորի հայհոյութեան եւ Լեւոնի Հռոմայ հայրապետին։ Եւ հրաման ետ թագաւորն դարձուցանել զՆ(ե)ստոր զի կենդանի էր ՚ի կողմանս Աւժաստանի զի տացէ ընդունել ժողովոյն. իսկ ի դառնալն նորա բարկութիւն Այ հասանէր ի վերայ նորա. եւ հեղոյր որովայն նորա որպէս Յուդային եւ Արիոսին. եւ այսպէս սատակէր ի կենաց։

Իսկ ժողովեալքն ի Քաղկեդոնի էին վեց եպիսկոպոսք գլխաւորք որոց անուանքն են այս. Յոբնաղ Եմի. Դիոսկորոս Աղեքսանդրացի, Մաքսիմիանոս Անտիոքացի. Սեփիանոս Եփեսոսի. Լեւոն Հռոմայ. Եւսեբի Փաիեզու. Անատոլիս Կոստանդինուպաւլսի. Իսկ Լեւոն Հռոմայ հայրապետն ոչ եկն ի ժողովն. բայց ետ բերել զատոն ու չորս (այսպէս) գըլխոցն զյառաջադրեալն զՓղաբիանոսի զի հաւանեցին այնմ ժողովեալքն ի Քաղկեդոն. զոր էր խոսեալ Դիոսկորոսի եւ ժողովեալքն ընդ նմա երկերիւր եպիսկոպոսաց. եւ առեալ թագաւորն զգրեալսն ընկալաւ զԼեւոնին. եւ ետ զատուցանել ի միաբանութենէ եպիսկոպոսացն զերանելին Դիոսկորոս. եւ խնդրեաց ի ժողովոյն սահման հաւատոյ ըստ գրելոյն ի Լեւոնէ հայհոյութեան։

Իսկ ուղղափառ իշխանքն որ էին ի ժողովն ասեն առ եպիսկոպոսունսն. Ա՛յս է ժամանակ ճգնելոյ ի վերայ հաւատոյ զի հաստատուն ունիցիմք զհարցն խոստովանութիւն աւանդութեան։ Եւ եպիսկոպոսունքն միաբան ասացին. Ոչ ունիմք իշխանութիւն զատ ի կանոնաց դնել սահման

*) Թղ. 115 բ։

digitised by A.R.A.R.@

հաւատոյ. զի բաւական է մեզ եղեալն որ ի Նիկիա եւ 'ի Կոստանդնուպաւլիս։

Յայնժամ Թագաւորն հրամա*)յեաց միայն զեպիսկոպոսունսն հանդերձ իշխանաւքն տանել ի պահեստ եւ զումարել ի վերայ նոցա զինազգեստ զաւրականս. զի թե ոչ հնազանդեսցին կամաց Թագաւորին, երկիւղիւ ահաբեկեալ եպիսկոպոսունսն կայցեն 'ի տարակուսանս թե զիարդ հնար իցէ զերծանել 'ի պատժոցն։

Յայնժամ Յոբնաղիոս եպիսկոպոսն Եմի, հրամայեաց Անկղիպեա արքեպաւսին Կոստանդնուպաւլսացւոց առնել սահման հաւատոյ եւ դնել զերկուս բնութիւն զմինն խոստովանել, որում առ երկիւղի հնազանդել եպիսկոպոսացն զի թերեւս հնար լիցի այնու զերծանել. եւ ետուն տանել զգիրն առ Թագաւորն. իսկ Թագաւորն ընկալաւ. եւ ետ տանել զգիր հայհոյութե Թղթոյն Լեւոնի. զոր ընթերցեալ մասն ինչ ի գրոյն միաբան ասացին. այսոցիկ ոչ հաւանիմք զի Պաւղոսի Սամոստացւոյ խոստովանութիւն է. զի այսպէս եւ ոչ Նեստոր մոլեգնեալ յանդգնեցաւ հայհոյել։ Յայնժամ Թագաւորն հանդերձ զուգակցաւ իւրով Պաւղքերաւ, եկն առ նոսա, եւ որպէս աւր եղեւ առ նոսա աւուրս երկուս։ Իսկ ժողովեալքն ի Քաղկեդոն ոմանք յերկիւղէ եւ ոմանք ակնաառութբ Թագաւորին եւ կնոջ նորա եղեն հաւանեալք պիղծ եւ նորաձայն հայհոյութեն Թղթոյն Լեւոնի. զոր նզովեցին յառաջագոյն եւ եղեն ընդ նոսին նզովիւք։ Ընկալան եւ զԹեոդորիտոս զՆեստորի աշաշակերտն (այսպէս). զորմէ ասի գլուխ լինել ժողովոյն. եւ զՋիբաս եպիսկոպոս համաշունչ Նեստորի. եւ գրեցին սահման հաւատոյ ըստ Լեւոնի եւ ըստ Թեոդորի մոլորութեն որ հաւասարի Նեստորի պղծի եւ Թեոդորիտի եւ Դիոդորի եւ Արտեմոնի եւ Պաւղոսի կատաղելոյ հայհոյութեն։ Յորում կանոնան յետ սակ(աւ)ուց ասէ այսպէս. Խոստովանիմք միայն ամենեքեան զՏր մեր Յս Քս ըստ Ածութեն 'ի Հաւր է եւ ըստ մարդկութեն ըստ Կուսէն. միածին յերկուց բնութեց. ոչ ինչ բառնալով յերկուց բնութեցն զանազանութիւն վասն միանալոյն. այլ առաւել ողջ պահելով զյատկութիւն երկաքանչիւր բնութեցն. եւ ի մի դէմ եւ ի մի անձն միաւորեալ։ Եւ զի մի իւրեանց ամբարշտութիւն երեւեսցի այնու պատճառանաւք զՆեստոր նզովեցին։

Իսկ բազումք ի գլխաւորաց քաղաքին Կոստանդինուպաւլսի որք Նեստորի հաւանեալք էին իբրեւ լուան զնզովքն որ զՆեստորէ զարմացեալ ասէին առաջի Թագաւորին որպէս եւ նոցունց Քաղկեդոնացւոց պատմութիւն ցուցանէ ասեն. եւ ոքն ընդէր նզովեն. զի թե զՆեստորին հաստատեցին զնա ընդէր նզովեցին։ Իսկ Թագաւորն սաստեաց նոցա զի լռեսցին։ **) Այսպէս ի նոցունց իսկ յայտնեալ կեղծաւորութի նոցա,

---

*) Թ. գ. 116 ա։
**) Թ. գ. 116 բ։

digitised by A.R.A.R.@

ծանուցաւ ամենեցուն որ առաւելպատուէրն յայտնի լուծին։ Զի որք ի Քաղկեդոնի ժողովեալ էին՝ եպիսկոպոսք․ նոյնք եւ յԵփեսոսի ժողովն գրով սահմանեալ եին․ Որ ոք ասէ զՔս երկուս բնութիւս նզովեալ եղիցի․ եւ լուծին 'ի պատուոյ զնստոր եւ զնմանիս նորա․ Իսկ ի Քաղկեդոն կործանեալք յերկիւղէ ձեռնադրով ուրացեալ զՔս․ ասեն Որ ոք չասիցէ զՔս երկուս բնութիւս նզովեալ լիցի․ եւ ընկալան ի պատիւ զհաւատացեալսն նորա։ Իսկ որք ոչ հաւանեցան կործանական ժողովոյն Քաղկեդոնի հայհոյութեան եւ անաւրէն սահմանադրութեան զնոսա աքսորեցին։ ԶՊետրոս Անտիոքացի եւ զԱնաստասիա եղբայր նորին, եւ զԴիոսկորոս Աղէկսանդրացւոց հայրապետն, նախ ի Կիղիկոն աքսորեցին․ ապա յԱրակլիայ․ ապա ի Պանփղագոնեա․ անդ կատարեցաւ սրն Դեոսկորոս բարի խոստովանութբ ի Քս։

Իսկ յետ աքսորելոյն զԴեոսկորոս զՊաուղէս հրամանաւ Մարկիանոսի ձեռնադրեցին ժողովն Քաղկեդոնի փոխանակ Դեոսկորոսի․ եւ առաքեաց Թագաւորն յԱղէքսանդրիա․ զոր ոչ ընկալեալ քաղաքին բազում աւարառութի ընչից, եւ խոշտանգանս գանից եւ տանջանաց եւ հեղումն արեան ընկալան ի Մարկիանոսէ, վասն չընդունելոյ զՊաուղէս եպիսկ(ոպ)ոս քաղաքին եւ ոչ հաղորդելոյ ընդ նմա․ սակայն մինչեւ ի սպառ ոչ կացին ի ճշմարտութեան այլ եղին բաժանեալ յերկուս, կէս քաղաքին ընկալան զՊաուղէս եպիսկոպոս եւ եղեն հաւանեալ աղանդոյն Քաղկեդոնի ժողովոյն․ եւ կէս քաղաքին յուղղափառութեան մնացեալ ոչ հաւանեցան նմա․ եւ յետ սակաւ միոյ ի սեննկի յաւթոց ի յանկողնի զահոյիցն հարեալ բարկութեն Այ զպիղծն Պաուղէս ի նմին գիշերի սատակեցաւ։ Եւ յետ նորա յաջորդէ զաթոռ եկեղեցւոյն Աղեքսանդրացւոց Տիմոթեոս երանելի եւ հաստատէ զկործանեալսն 'ի Պաուղէէ։

digitised by A.R.A.R.@